

**ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Քրիստինե Ասատրյանի ելույթը՝ «Հնարավորություններ երիտասարդներին» տոնավաճառ» միջոցառման ժամանակ**

Հարգելի՛ պարոն Աճեմյան, տիկին՝ Մովսիսյան, տիկին՝ Ստեփանյան,

Ողջունում եմ ձեզ, Հայաստանի Հանրապետության ազատ, հպարտ և հեղափոխական երիտասարդներ:

Շատ ուրախ եմ, որ որպես ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ առաջին անգամ ելույթ եմ ունենում հենց նմանատիպ հանրային միջոցառման ժամանակ, առավել ևս նման ներառական լսարանի առջև: Ինձ համար մեծ պատիվ և պատասխանատվություն է զբաղվել ՀՀ նոր կարավառության ամենագերակա ոլորտներից մեկի՝ երիտասարդության հարցերով: Երիտասարդները կատարեցին իրենց քայլը՝ հեղափոխությունը դարձնելով իրականություն, և շարունակում են մնալ մեր նոր Հայաստանի հիմնասյունը: ԵՎ ես ամեն ինչ կանեմ, որ այդ հիմնասյունը ոչ միայն մնա այլ նաև հնարավորինս շատ ամրանա:

Ժամանակն է, որ նոր Հայաստանի նոր կառավարությունը զբաղվի ՀՀ երիտասարդների հիմնախնդիրներով: Ուզում եմ այսօր բոլորիդ հավաստիացնել, որ մեզ համար առաջնահերթություն է երիտասարդների զբաղվածության, մասնագիտական կրթության և ձեռներեցության խթանումը: Սրանից ելնելով գնահատում եմ «ԵՄ-ն հանուն երիտասարդների՝ հմտություններ ապագայի համար» ծրագրի դերը՝ կարևորելով ԵՄ աջակցությունը և համագործակցությունը, որը նույնպես բխում է ՀՀ կառավարության առաջնահերթություններից:

Հպարտ երիտասարդներ, իմ խորհուրդն է ձեզ՝ ակտիվորեն մասնակցել «Հնարավորություններ երիտասարդներին» տոնավաճառին, այստեղ ներկայացած տարբեր ոլորտների ներկայացուցիչներից ստանալ տեղեկատվություն և հաստատել նոր կապեր: Երբեք ուշ չէ ինքնազարգացման խթաններ գտնելու համար, որոնք այս տոնավաճառին առաջարկվում են աշխատանքային պրակտիկայի, կամավորության, փոխանակման և այլ ծրագրային հնարավորությունների տեսքով: Գիտեմ նաև, մարդկային գրադարանի մասնակիցներից մի քանիսին, որոնց անձնական պատմությունները վստահ եմ շատերիս համար ոգեշնչման և մոտիվացիայի աղբյուր կարող են դառնալ:

Ես ինքս նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնել եմ ոչ այնքան իմ բարձրագույն կրթության, որն անչափ կարևոր է մարդու զարգացման և ինքնառեալիզացման համար, այլ նաև այն փաստի շնորհիվ, որ երիտասարդ հասակից զբաղվել եմ ինքնազարգացմամբ, ստացել ոչ ֆորմալ կրթություն՝ հմտանալով այդ ոլորտում, դառնալով դրա ջատագովը և տարածողը:

Հաշվի առնելով այս կարևոր հնարավորություններին ծանոթանալու ձեր ոգևորվածությունը, այսքանով կամփոփեմ ելույթս՝ մաղթելով ձեզ արդյունավետ օր «Հնարավորություններ երիտասարդներին» տոնավաճառում, ինչպես նաև բոլոր

շահառու կազմակերպություններին և անհատներին մաքսիմալ արդյունավետ աշխատանք այս բնագավառում: